ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հոկտեմբերի 2021 թվականի N 265-Հ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 16/2 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ և 13-րդ կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման թիվ 20 հավելվածի (Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-32.3-Մ2-3) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր) «**3.1.Կրթությունը, որակավորման աստիճանը**» ենթակետի աղյուսակը

«

1.	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2.	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3.	Ենթաոլորտ	Տնտեսագիտություն
4.	Մասնագիտություն	Տնտեսագիտություն

»

փոխարինել «Բարձրագույն կրթություն» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման թիվ 47.1 հավելվածի (Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 46-32.7-Ղ4-2) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր), 69 հավելվածի (Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի տասներորդ վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 46-32.10-Մ2-2) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր) «**3.1.Կրթությունը, որակավորման աստիճանը**» ենթակետում կատարել լրացում՝

«

1.	ՈՒղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2.	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3.	Ենթաոլորտ	Տնտեսագիտություն
4.	Մասնագիտություն	Տնտեսագիտություն

»

աղյուսակից հետո լրացնել կամ

1.	ՈՒղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
2.	Ոլորտ	Գործարարություն և վարչարարություն

»

աղյուսակը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ